


կատար ցուցակը ամբողջ ընտրութեան նկարագրութեան հետ:

— Մ. Աթոռի հոգեոր ճեմարանում՝ դասախոսութիւններ պիտի կարգացուին եկեղեցական, մատենագրական և պատմական նիւթերի մասին կաթուղիկոսական պատգամաւորներին մտաւոր զրօսանք պատճառելու նպատակով:



Մայր Աթոռի «Արարտ» ամսագրի խմբագրութեան:

Բարձրագատիւ 8. Մեսրոպ վարդապետը իւր «Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիներ» աշխատութեան մէջ (Ազգական գույքի և ԽV և XVI) Զուարթնոց եկեղեցւոյ մասին խօսելիս յայտնում է, որ մանրազննին յատակագիծն գլխաւոր եկեղեցւոյ կազմել է Քրիստափոր Տէր Սարգսեանը, իսկ ընդհանուր յատակագիծը ճարտարագետ Թորամանեանը: Այս անգեկութեան հիման վերաց է, Գարեգին վարդ Յովոնիկեանը Մատի «Օ քառորդական Ան 1906 թ.» աշխատութեան քննադատութեան մէջ (Արարտ, 1908, մարտ) յիշում է, թէ Զուարթնոց եկեղեցւոյ վերակազմութեան երկու նախագծեր են կատարուած: Այս կետը առիթ է տուել ուսուցչապետ Մառին իւր «Անոյ շարք է երես ԱI ծանօթութեան մէջ տարակոյս յայտնել, թէ ինչու պէտք է բացատրել այն հանգամանքը, որ 1905 թ. Մուրճի Մայիս համարում պ. Թորամանեանը Զուարթնոցի յատակագիծը հրատարակել է հինգ դռնով, իսկ Մեսրոպ վարդ Նոյն թուին «Էջմիածին և հնագոյն եկեղեցիներ» գրքոյնի մէջ՝ Տէր Սարգսեանի յատակագիծն երեք դռնով: մինչդեռ Հանդէս Ազգական մէջ նկատւում են յատակագիծի վրայ կլիշեում քերտուած երկունոր դռների տեղ Թորամանեանի յատակագիծի համաձայն:

Ես իրեն Զուարթնոց եկեղեցւոյ պեղումները կատարած և գործին լուր տեղեակ, պարտք եմ համարում յանուն ճըշմարտութեան յայտնել, որ պ. Թորամանեանն է առաջին անգամ ոչ միայն լրիւ յատակագիծ կազմողը, այլ և ամբողջ շենութեան արտաքին և ներքին մանրազննին վերակազմողը 1904 թ. մարտ—յունիս ամիսներում:

Խաչիկ ձ. Վ. Զաւարենց.